ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-20-7/19-1

ք. Երևան 26.08. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2639916 (երկու միլիոն վեց հարյուր երեսունինը հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:***

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման

ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	"Արդշինբանկ" ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2472300000170000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00803554
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-7/19-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. <u>Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր գեներալական (լրակազմ)</u> Կիտելը՝ բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով:Լանջափեշերը կոճկվում են չորս՝ ՀՀ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական՝ ՀՀ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, ասեղնագործված դափնու ճյուղերով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված:Աստառը՝ԳOUS-20272-2014 8-C5-ԲՇ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գործվածքից:Ձախ լանջափեշին մշակվում է կտրվածքով ծոցագրպան: Ազատթող տաբատը՝ կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում են 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահուդից կամ համարժեք երիզներ, երիզների երկայնքով կարվում են զույգ լոմպասներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ԳOUS-20272-2014 8-C5-ԲՇ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:

Կոստյումը՝ 2212 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 330 գրամ մակերեսային խտությամբ և 72% բրդի 28% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Պատվիրատուի կողմից տրամադրվում է՝ երեսացուի գործվածք, կոճակներ 22մմ և 14մմ ոսկեգույն ՀՀ զինանշանով, ուսադիրներ, կարմիր մահուդ, թևքանշան, դափնետերև:
Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

2. <u>Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր գեներալական (լրակազմ)</u> Կիտելը՝ բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում նաև վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով:Լանջափեշերը կոճկվում են չորս՝ ՀՀ զինանշանի պատկերով 22 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական՝ ՀՀ զինանշանի պատկերով 14 մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով իսկ կողքերից կտրվածքով, կափույրով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, ասեղնագործված դափնու ճյուղերով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ, թևերը ներկարված:Աստառը՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲՇ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն կտորից:Ձախ լանջափեշին մշակվում է կտրվածքով ծոցագրպան: Ազատթող տաբատը՝ կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում են 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահուդից կամ համարժեք երիզներ, երիզների երկայնքով կարվում են զույգ լոմպասներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ ԳOUS-20272-2014 8-C5-ԲՇ արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:

Կոստյումը՝ 2212 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 330 գրամ, 1մ2 մակերեսային խտությամբ և 72% բրդի 28% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:

Պատվիրատույի կողմից տրամադրվում է՝ երեսացուի գործվածք, կոճակներ 22մմ և 14մմ ոսկեգույն ՀՀ զինանշանով, ուսադիրներ, կարմիր մահուդ, թևքանշան, դափնետերև:

Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

3. <u>Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր գեներալական (լրակազմ)</u> Բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը միացվում են կետրոնական շղթայական, կոկետկայով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են երկու ՀՀ զինանշանի պատկերով, պաշտպանական գույնի 14 մմ, ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Մեջքը կոկետկայով: Օձիքը ծալովի, օձիքի

միացման կարում մշակված է կախիչ, թևքերը ներկարված, ՀՀ զինանշանի պատկերով, պաշտպանական գույնի 14 մմ, այլումինե համաձուլվածքից երկուական կոճակներով կոճկվող բազկակալներով: Ուսադիրների շրջանում երեք փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար:
Ազատթող տաբատը՝ կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան կափույրով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1,5-2 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կարմիր գույնի մահուդից կամ համարժեք երիզներ, երիզների երկայնքով կարվում են զույգ լոմպասներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է ՝ ԳOUS-20272-2014 8-C5-ВШ արտիկուլի կամ համարժեք գործվածքից դեղնականաչավուն գույնի աստառացու:

Բաճկոնը և տաբատը՝ 2212 արտիկուլի կամ համարժեք կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից, 330 գրամ, 1մ2 մակերեսային խտությամբ և 72% բրդի 28% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի:

Պատվիրատուի կողմից տրամադրվում է՝ երեսացուի գործվածք, կոճակ 14մմ պաշտպանական գույնի, կոճակ 14մմ պաշտպանական գույնի ՀՀ զինանշանով, ուսադիրներ, կարմիր մահուդ, թևքանշան: Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

4. **<u>Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր (լրակազմ)</u>** ԳOUS-20176-84: Բաճկոնը մշակված է տաքացնող սինթետիկ ներդիրով, հանովի բնական մորթե օձիքով և ներդիրով: Թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարի լայնությունը 0,6 սմ: Առաջամասերում գոտկատեղից ներքև մշակված է վրանկար կրկնակի գրպաններ կափույրներով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Կափույրները կոճկվում են կոճկվում են գաղտնի կոճկվածքով, 2 օղակ կոճակով:

Բաճկոնը ունի ներկարված երկկարանի թևքեր: Թևքերի բազկամասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2 կոճակներով:
Բաճկոնը կոճկվում է շղթայով, 5 կոճակօղակներով: Մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ուսամասերում մշակված են ուսադիրներ: Օձիքը ծալովի կտրված կանգունակով: Բաճկոնի աստառը մգդակարված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է մեկ օղակով և կոճակով: Հանովի ներդիրը կազմված է լանջափեշերից և մեջքից, ներդիրը բաճկոնին ամրանում է շղթայով: Ներդիրի հակառակ երեսը մշակված է բիազով: Բաճկոնին կոճկվում է լրացուցիչ մորթե օձիք, բամբակյա աստառով և երկշերտ սոսնձապատ ներդիրով, օձիքի միացման կարում մշակված է կախիչ:Օձիքը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 4 օղակներով և բաճկոնին կարված 4 կոճակներով: Անհատական պատվերը առանց փաթեթավորման:

ՑԱՆԿ

հ/հ	Ապրանքատեսակ	Տրամադրվող նյութերը	Ծախսը միավորի համար
	ԳԵՆԵՐԱԼԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔ		
1.	Կոստյում կիսաբրդյա կտորից, տոնական (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կոճակ 22մմ ՀՀ զինանշանով 3. կոճակ 14մմ ՀՀ զինանշանով 4. կարմիր մահուդ 5. թևքանշան 6. ուսադիրներ 7. դափնետերևի լրակազմ՝ փայլ-1լ-կ /64 հատ/, կանիտել-6գր., տրաֆարետ-1զ-գ	1. 1.5 լայնքով 3.06գ/մ 2. 4 հատ 3. 4 հատ 4. 1.5 լայնքով 0.19գ/մ 5. 1 հատ 6. 1 զույգ, ըստ կոչման 7. 1 լ-կ
2.	Կոստյում կիսաբրդյա կտորից ամենօրյա (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կոճակ 22մմ ՀՀ զինանշանով 3. կոճակ 14մմ ՀՀ զինանշանով 4. կարմիր մահուդ	1. 1.5 լայնքով 3.06գ/մ 2. 4 հատ 3. 4 հատ 4. 1.5 լայնքով 0.19գ/մ

		5. թևքանշան 6. ուսադիրներ 7. դափնետերևի լրակազմ՝ փայլ-1լ-կ /64 հատ/, կանիտել-6գր., տրաֆարետ-1գ-գ	5. 1 հատ 6. 1 զույգ, ըստ կոչման 7. 1 լ-կ
3.	Բաճկոն/կուրտկա/ և տաբատ կիսաբրդյա (անհատական պատվեր)	1. երեսացուի գործվածք 2. կոճակ 14մմ պաշտպանական գույնի 3. կարմիր մահուդ 4. թևքանշան 5. ուսադիրներ 6. կոճակ 14մմ ՀՀ զինանշանով	1. 1.5 լայնքով 2.86գ/մ 2. 6 հատ 3. 1.5 լայնքով 0.19գ/մ 4. 1 հատ 3. 2 հատ
4.	Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով	1. երեսացուի գործվածք	1. 1.5 լայնքով 2.7գ/մ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
Հ/հ	**անվանումը**	**չ/մ**	**քանակը**	**միավորի գինը (ՀՀ դրամ)**	**ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)**	**մատուցումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝**
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ
	դերձակի ծառայություն, այդ թվում	**դրամ**	**1**			
1	/Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր գեներալական/	լ-կ	12	34998	419976	12
	դերձակի ծառայություն, այդ թվում	**դրամ**	**1**			
2	/Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր գեներալական/	լ-կ	30	34998	1049940	30
	դերձակի ծառայություն, այդ թվում	**դրամ**	**1**			
3	/Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր գեներալական/	լ-կ	30	15000	450000	30
	դերձակի ծառայություն, այդ թվում	**դրամ**	**1**			
4	/Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր/	լ-կ	12	60000	720000	12

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-7/19-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ., ընդ որում՝		
չ/հ	անվանումը	CPV կոդը	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	դերձակի ծառայություն /Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, տոնական անհատական պատվեր գեներալական/	98391120/36	419976	419976	419976
2	դերձակի ծառայություն /Կոստյում՝ կիսաբրդյա կտորից, ամենօրյա անհատական պատվեր գեներալական/	98391120/37	1049940	1049940	1049940
3	դերձակի ծառայություն /Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա անհատական պատվեր գեներալական/	98391120/38	450000	450000	450000
4	դերձակի ծառայություն /Բաճկոն ձմեռային մորթե օձիքով և ներդիրով անհատական պատվեր/	98391120/39	720000	720000	720000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-7/19-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-20-7/19-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն